Սվետլանա և Ջուլիա Գարեգինի Պետրոսյանների ընտանիքի պատմությունը:

Քույրերի հետ հանդիպումը տեղի ունեցավ Ջուլիա Պետրոսյանի բնակարանում՝ Երևան քաղաքում, 29.06.2022-ին:

Սվետլանա և Ջուլիա Գարեգինի Պետրոսյան քույրերը:

Ջուլիա Գարեգինի Պետրոսյանը ծնվել է 1941թ. դեկտեմբերի 14-ին Թիֆլիսում և բիոլոգիական գիտությունների թեկնածու է: Մենակ է ապրում է իր մեկսենյականոց բնակարանում: Մեր հարցազրույցի համար, հրավիրել էր մեծ քրոջը՝ Սվետլանային, որն ըստ նրա ավելի լավ է հիշում իրենց ընտանիքի Սիբիրում անցկացրած տարիները:
Սվետլանա Գարեգինի Պետրոսյանը ևս ծնվել է Թիֆլիսում, կրթությամբ ինժեներ է և երկար տարիներ դասավանդել է Պոլիտեխնիկական ինստիտուտում, զբաղեցրել ղեկավար պաշտոններ:

Ռ1_ Անունս Սվետլանա Գարեգինի Պետրոսյան է: Я родилась в Грузии в 1939 году 3-го октября /ծնվել եմ Վրաստանում 1939թ.-ի հոկտեմբերի 3-ին/: Հետո, հայրս աշխատում էր, տեղափոխվեց Երևան ու ընտանիքն էլ բերեց: Там работал он в этот… городе Поти / այնտեղ նա Փոթի քաղաքում էր աշխատում/ ու սկսեցինք ըստեղ ապտրել: Ես առաջի երեխան էի ընտանիքում, старшая дочь, потом родились Джулия, брат, но брат уже родился там /ավագ դուստրը, հետո ծնվեց Ջուլիան, եղբայրս, բայց եղբայրս արդեն ծնվեց այնտեղ/՝ Սիբիրում, ու փոքր քույրն էլ ա ընդեղ ծնվել:
Мы здесь жили, ну в 41-м папу взяли на фронт, понятно… /մենք այստեղ էինք ապրում, դե պարզ է՝ 41-ին հայրիկին տարան ճակատամարտ/: Մենք մեծ ընտանիքով էինք ապրում՝ կար տատիկս, մաման, я хорошо помню эти времена /ես լավ եմ հիշում այդ ժամանակները/, հորաքույր՝ со своей дочкой / դստեր հետ/ տենց էինք ապրում՝ բոլորս միասին:

С тех времен, с детства тоже вспомнила /էն ժամանակներից, էլի մանկությունից հիշեցի/՝ ուզում եք պատմեմ ոնց էր մամաս պատերազմի տարիներին ամերիկանսկի պառաշոկից /փոշուց/ ձվածեղ պատրաստում: Мы тоже ржали, радовались и кушали / մենք էլ ծիծաղում էինք, ուրախանում ու ուտում/: Դուք դա դժվար հասկանաք, դա ապրել էր պետք, իսկ իմ հիշողության մեջ մի տեսակ մնացել ա: Ոնց-որ праздник /տոն/ էր, որ ձվածեղ էր անում էդ փոշով, կերասինկի վրա: Даже сейчас помню эту комнату и где стояла эта керосинка и как мама гатовила яишницу /անգամ հիմա հիշում եմ այդ սենյակը, որտեղ էր դրված կերոսինը և թե ինչպես էր մայրս ձվածեղ պատրաստում: Բաբուշկեն /տատիկը/ նստում էր թախտի վրա ու բան էր անում՝ փոքրներին ոտքերի վրա օրորում էր, որ քնեին: А в эту ночь, когда эти трое в военной форме, с ружьями пришли к нам, отца посадили на стул … /իսկ այդ գիշեր, երբ համազգեստով, զինված երեք հոգի մեր տուն եկան, հորս աթոռին նստացրեցին/, իրանք կանգնեցին կողքը՝ մամային էլ ասեցին վեշերը հավաքի:

Ռ2_ У нас ремонт был, когда нас забрали /մենք տունը վերանորոգում էինք, երբ մեզ տարան/ նապոլեոնի շերտերն էլ դարակի գլխին, նենց լավ եմ հիշում: И грузовая машина была, во дворе стояла, нас в ней отвезли на вокзал /իսկ բակում բեռնատարն էր, որով մեզ կայարան տարան/:

Ռ1_ Они сказали собирать вещи, и что поедем недалеко, будет все нормально, ничего с собой тяжелого не берите, много вещей не берите, вам все необходимое выдадут и т.д. / նիրանք

ասեցին իրերը հավաքենք, որ հեռու չենք գնալու, ամեն ինչ լավ կլինի, ծանր ոչինչ չվերցնենք, շատ իրեր չհավաքենք, որ ամեն անհրաժեշտ բան մեզ կտրամադրեն/: Դե… մինիմում վեշերը մաման հավաքեց, համ էլ էն վախտ մաման հոլի էր: Դե էն ժամանակ երեխա էինք չէինք հասկանում, երբ երեխան ծնվեց, նոր իմացանք: Մեզ նստացրեցին էդ գռուզավիկը /բեռնատարը/ ու տարան Ուրուխանլույի կայարան: Ընդեղից էլ товарный состав /բեռնատար գնացք/, երևի մի երեսուն վագոն կլիներ, լցրեցին մեզ դրանց մեջ ու ուղարկեցիցն:

Ռ2_ Էդ ժամանակ, մամայի մաման՝ տատիկս, մեզ հյուր էր էկել, որովհետև մաման շատ ծանր էր տանում հղիությունը: И она все время была рядом с нами /և նա միշտ մեր հետ էր/: Չեմ հիշում մաման էդ ժամանակ որ սռոկում /ժամկետում/ էր, բայց սենց՝ հունիսին գնացինք, երեխեն ծվնվեց նոյեմբերին: Էդ ասում եմ, որովհետև բաբուշկաս /տատիկս/ էդ ցուցակում չկար ու իրան չէին ուզում վերցնեին մեր հետ: Իսկ տատիկս ասեց. ”где моя дочка, там и я” /որտեղ աղջիկս, այնտեղ էլ ես: Իրա պասպոռտը /անձնագիրը/ վերցրին արդեն երբ որ Սիբիրում էինք, իսկ մինչև էդ ինքը ազատ էր՝ կարար ուր ուզում էր գնար: Ու տենց էդ խեղճ կնիկը յոթը տարի մեր հետ տանջվեց: Ու լավ էր, որ բաբուշկան /տատիկը/ մեր հետ եկավ, մեզ շատ-շատ էր օգնում: Էդ գնացքներն էլ, սենց մի տեսակ երկկողմանի դռներ ունեին, որ բարձր ձենով էին բացվում-փակվում՝ մինչև հիմա ձենը ականջներիս մեջ ա: էն էլ ոչ թե նստացնում էին, այլ միանգամից ասում էին գռուզավիկից /բեռնատարից/ թռնենք վագոնի մեջ: Վագոնները ահավոր մեծ էին, ներսը պոլկաներ կային երկու կողմից, որ մարդիկ դրանց վրա նստերն, կամ պարկեին, չգիտեմ… Որ մենք մտանք էդ վագոն դեռ մարդ չկար ու մենք արագ ձախ կողմից պատուհանի մոտ տեղ զբաղացրինք որ մամային հարմար լինի: Ամբողջ ճանապարհին մաման էդ պատուհանից դուրս էր նայում, որ սիրտը խառնում էր գլուխը դուրս էր հանում, էլ չգիտեմ ինչեր…Ու գետնին էլ լիքը մարդ կար, չէիր կարա քո համար ազատ քայլեիր: Չգիտեմ քանի հոգի կար, բայց շատ էին: Օրվա մեջ գնացքը կանգնում էր մենակ մի անգամ՝ որ մարդիկ туалет – вода, только один раз /ջրի ու կարիքի համար, միայն մի անգամ/, իսկ մինչև էդ վագոնում վեդրո կար: Էն էլ էնքան կոպիտ էին խոսում հետներս, ոնց-որ մարդ չլինեինք իրանց համար: Մեզ կերակրում էին՝ վեդրոյով բերում էին իրանց ամաններով տալիս էին, բայց էդ ամանները մեր մոտ էր մնում, որ հաջորդ անգամ էլի ամեն մեկս մեր ամանով իրա բաժինը ստանա: Իրանց բերած ճաշն էլ дрянь /զիբիլ/, ավելի վատ էին կերակրում քան բանակում, համ էլ ամառ էր, շոգ… Մեկ էլ в какой-то день, էնքան լավ եմ

հիշում, պատի տակի բաբուշկեն /տատիկը/ մահացավ: Էդ մեռելը մեզ հետ էնքան գնաց, մինչև վագոնի դուռը բացելու ժամը: Ու մութ, օդ չկար շնչելու, լավա էդ ֆոռտչկեքն /պատուհանները/ էլ կային:

Սվետլանա և Ջուլիա Պետրոսյանների տատիկի նկարը երիտասարդ տարիքում:

Ռ1_ Երբ բոլորին բերեցին Սիբր՝ Ալտայսկիյ կրայ, սկսեցին տարածել ժողովուրդին գյուղերով: Մեզ բերեցին 155 участок /հատված, տարածք/ ու շատ մարդ կար ընդեղ: Որ խոսում էիր ընդեղ ռուսների հետ մարդիկ չգիտեին что такая страна Армения существует, и что она в составе Советского Союза /որ Հայաստան անունով երկիր կա ու որ այն Խորհրդային Միության կազմում է/: Մեր ժողովուրդը սովոր չէր էդ անտառների գործին, ընդեղ многие погибли /շատերը մահացան/: Ջահելները գնում էին որ աշխատեն, ծնողին օգնեն: Էնքան ուսանողներ անկիրթ մնացին, որ ստեղից կիսատ թողած էկել էին, ընդեղ որտեղ պտի սովորեին, իրանք մնացին անկիրթ: Որն ամուսնացավ, որը գնում էր աշխատելու, դրան

գումարած ընդեղի կլիմայից շատերը հիվանդանում էին, պայմաններ չկային, սովորացնող չկար: Հերս որ կիրթ էր մեր հայ տղերքին կարողանում էր օգներ, գրում էր իրանց համար, բան տարբեր թեմաներով:

Հացը չէր հերիքում, նառմիռվննի էին տալիս աշխատողին՝ 800գր., չաշխատողներին ու երեխեքին՝ 200գր. հաց: Էդ հաց չէր, ցեխ էր, որ ճզմեիր ջուրը կկաթար: Ու որ աշխատողների բաժինը տենց շատ էր տատիկս էլ գնաց աշխատելու՝ բայց էդ մի քիչ ավելի ուշ էղավ: Խլեբը /հացը/ նառմիռվննի էր, իսկ մնացածը մենք պտի առնեինք: Բրինձ, ոսպ, տենց բաներ ստեղից էին ուղարկում բարեկամները, սկզբից ցամաք հաց էինք ուտում, մինչև որ պապան աշխատեց՝ կարողացանք ինչ-որ բաներ առնենք: Էդ պասիլկեքն /ծանրոցներ/ էլ էնքան երկար էին գալիս, միջի էղածը հալում էր, հետո նորից բան էր անում…Մենց քառակուսի, կարիչնիվի /շականակագույն/ շուշա կանֆետներ կային, մինչև հասնելը հալում էին, հետո մաման մի հատիկը ջարդում էր՝ քանի կտոր էր անում, տալի մեզ, մենք էլ ուրախանում էինք՝ որ դրանով ենք էդ օրը չայ խմելու:

Ռ2_ էն էլ շատ մարդ չէր կարում ստանար էդ պասիլկեքը, ով ուներ, ով չուներ… Հետո որ մեր բռատիկը /փոքր եղբայրը/ ծնվեց մեզ սպեցիալնի պիտանի /հատուկ սնունդ/ էին տալիս իրա համար: Если бы не эти печенья, он бы не выжил /առնց այդ բլիթների, նա չէր ապրի/:

Ռ1_ Нас когда привезли в эту деревню, ну там лес... и земляника росла, мы как налетели на эту землянику, мы же горожане, не видели ничего, кушаем радуемся, нам казалось в хорошое место попали /երբ մեզ էդ գյուղը բերեցին, այնտեղ անտառ կար ու մորի էր աճում, հարձակվեցինք էդ մորում, քաղաքից էինք՝ բան չէինք տեսել, ուտում ու ուրախանում էինք որ լավ տեղ ենք եկել:

Ռ2_ Սկզբում բոլոր ընտանիքներին տեղավորեցին կլուբում /ակումբում/, ընդեղ սեղանները էս կոմ էն կոմ քաշեցին ու ամեն մի ընտանիք մի անկյունում մի կերպ տեղավորվեց: Բայց մենք չգնացինքը ըտեղ, մեր ընտանիքի համար դա շատ դիկ /վայրենի/ էր: Мы сидели не знали что делать /նստել ու չգիտեինք ինչ անենք/ мы не могли таклаясь себе место занять, не могли /չէինք կարող հրվելով մեզ տեղ զբաղացնել, չէինք կարող/: Հետո պարզվեց, որ էլ ուրիշ տեղ չկա: Нам принесли лестницу и сказали поднятся на чердак /աստիճաններ բերեցին ու ասեցին բարձրանանք ձեռնահարկ: Ու տենց, երեք ընտանիքով բարձրացանք, որ ինչ ասես կար՝ էլ լու, էլ ինչ ուզես… Ու մեր տատիկը, դե մաման չէր կարա, նենց աստիճաններ էին որ

վախենում էիր ոտդ դնեիր, օջախի վրա ճաշ էր սարքում ու սպասում էինք, որ պապան աշխատանքից գա ու բարձրացնի վերև որ ուտեինք: Между прочем, мы имели преимущество живя на чердаке /ի դեպ, մենք ունեինք ձեղնահարկում ապրելու առավելություն/ մեզ՝ էդ երեք ընտանիքներին հողամաս հատկացրեցին ու ասեցին որ կարանք մեր համար տուն սարքենք: Որովհետև արդեն ձմեռ էր մոտենում, սկսեցին արագ սարքել էդ փետից տները: Պապան в леспромхозе работал десятником, такая должность была / անտառտնտեսությունում էր աշխատում, 10 հոգանոց խումբ եր աշխատացնում, էդպիսի հաստիք կար/ ու բրիգադան էլ հայ տղերք էին սաղ… ասում եմ մեր ընտանիքը բոլորից տարբերվում էր, մերոնք սև գործ չեն արել:

Ռ1_ Папа был бухгалтер-ревизор по профессии, мама бухгалтер /հայրիկը մասնագիտությամբ հաշվապահ-վերահսկող էր, մաման՝ հաշվապահ/: Էն առավելությունը որ բոլորս լեզուն գիտեինք, դա շատ կարևոր էր: Մենք էլ ստեղ ռուսական դպրոց էինգ գնում, դրա համար չտուժեցինք: Ես գնացի 4-րդ դասարան Ջուլիան 2-րդ: Ընդեղ որ դպրոց գնացինք մի սենյակում 2 դասարան էր միանգամից նստած՝ մի շարքը 4-րդ դասարան, մյուսը՝ 2-րդ: Իսկ ընդհանոր առմամբ, հայկական դպրոց գնացող երեխեքը շատ էին դժվարանում՝ դրա համար երկու-երեք դասարան ներքև էին նստում:

Ուրեմն մեր իզբուշկայի /տան/ կեսը հողի մեջ էր, մինչև պատուհան տենց էին անում, и одна комнатка всего, и печка чугунная, должны были далеко держаться, чтоб не обжечся /և ընդհամենը մի սենյակ ու չուգունե վառարան՝ պիտի հեռու մնայինք որ չվառվեինք/: Ընենց մեր երեք ընտանիքների տները շատ մոտ էին իրար՝ մոտավորապես երկու մետր հեռավորության վրա: Մեջը մեկ էլ մամաենց կռավաթն էր, մի հատ սեղան, մենք թախտի վրա էինք քնում:

Ռ2_ В ночь, когда у мамы начались боли, пошли дверь открывать, дверь не открывается замело снегом, и кинулись к окнам орать на помощь /երբ մամայի ցավերը սկսվեցին, վազեցինք դուռը բացելու՝ ձնով ծածկվել էր, չէր բացվում, ու գնացինք պատուհանից օգնություն կանչելու/, բաբուշկաս /տատիկս/ էլ մամային էր նայում: Վերջը, մի ժամ գոռալուց հետո, դե գիշեր էր, քնած էին, հարևանները էկան էդ ձյունը մաքրեցին ու Կատյա տյոտյան էկավ, տատիկի նման մեծ կին էր: Կատյա տյոտյաի տղեքն էլ վազեցին ակուշեռկայի հետևից /մանկաբարձ/: Պապան աշխատանքից առավոտը որ եկավ՝ երեխեն արդեն ծնվել էր: Մաման էլ երեխեն էլ

оба были на грани /երկուսն էլ ծայրահեղ վատ էին/: У нее 40 дней температура была 40 градусов, кормить не может ... в общем... /մամայի ջերմությունը 40 օր 40 աստիճան էր ու չէր կարող կերակրել… մի խոսքով…/: Արդեն չեմ հիշում ոնց ու ինչ էինք ուտացնում երեխուն, մինչև մաման լավացավ: Հետո էդ ժամանակ մենակ պապան էր աշխատում, մի կերպ էինք հասցնում: Բայց ախպերս ընենց սիրուն էրեխա էր, я не могу описать /չեմ կարող նկարագրել/: Ես որ 7-րդ դասարան էի, իրան ձեռից բռնած տանում էի առաջի դասարան, վայ… ինքը ուներ 4 դաս, գնում էր պահակի կողքը նստում… Ես հիմա էլ պատմում եմ ու լացս գալիս ա, բայց էդ արդեն Երևանում էինք 76 դպրոցում: Ուրեմն նստում էր, սումկեն /պայուսակը/ դնում էր գոքին, շատ սիրուն պալտո /վերարկու/ էր հագին ու շառֆիկ /վզկապ/ ու նկար էլ ունի տենց նստած: Տենց ինձ սպասում էր երկու ժամ: Լացս գալիս ա մինչև հիմա որ հիշում եմ էդ խեղճ երեխեն ինչ տանջանքներ քաշեց իմ պատճառով՝ որ ինքը մենակ չէր կարա գնար, զբաղմունք չկար ու ուզած-չուզած պտի սպասեր: И все говорили “какой красивый мальчик” /ու բոլորն ասում էին ՛՛ինչ սիրուն տղա է՛՛/: Մեկ մամայի համար եմ խեղդվում, մեկ էդ երեխու՝ որ էդ տեսարաններն աչքիս առաջ ա գալիս:

Ռ1_ Մեզ մեր հարևաններն էին օգնում էդ բոլոր հարցերում ու սաղս հայ էինք: Հետո դպրոցում տեսանք որ տարբեր ազգերի ներկայացուցիչներ էլ կան: Օրինակ, որ տեղափոխվեցինք Տյագուն մաթեմատիկայի պեդագոգը /ուսուցիչը/ գերմանացիր էր ու լիքը-լիքը ուրիշ ազգեր որ տարբեր ժամանակներում էին էկել: Кто во время войны, потом дети там выросли, работали там /ով պատերազմի ժամանակ, ում երեխաներն էին այնտեղ ծնվել, աշխատում էին/: Գերմաներենի դասատուն էլ էր գերմանացի, քիմիայի դասատուն՝ կարեյանկա շատ սիմպատիչնի, ինտիլիգենտ կին էր: Էդ մատեմատիկը շատ լավ մարդ էր կարճ ազգանուն ուներ՝ Կուրց ու великан /հսկա/ էր, շուշուտ իրանց տուն էինք գնում: Դասերից բացի, ուղղակի մարդկային, գնում էինք, շատ юморной /հումորով/ մարդ էր: Դպրոցում մի քանի հոգու առանձնացրել էր, որ ավելի լավ էինք սովորում ու մեր հետ специально /հատուկ/ պարապում էր: Կլասին /դասարանին/ բացատրում էր, մեզ էլ լրացուցիչ что-нибудь сложное /ինչ-որ բարդ բան/ տալիս, он чувствовал, что нам простые вещи будет неинтересно /զգում էր, որ հեշտ բաները մեզ հետաքրքիր չի լինի/: Սաղիս ուզում էր գնաինք ֆիզմաթ սովորեինք, բայց ոնց-որ մենակ մեկը գնաց: Բայց հիմնականում технический вуз /տեխնիկական բուհ/ գնացին: Հետո մեկ-մեկ թեմա էր տալիս, ասում էր պատրաստվեք որ

դուք դասը բացատրեք իմ փոխարեն, մեզ պատրաստում էր к педагогической деятельности /մանկավարժական գործունեությանը/: Դե, բայց մենք արդեն մեծ էինք, 9, 10-րդ դասարաններ:

Ռ2_ Вот когда мы уже в школе учились я во 2-м классе, Света в 4-ом, и как мы закончили эту школу, еще жили на этом участке /արդեն երբ դպրոցում էինք սովորում, ես՝ 2-րդ, Սվետան՝ 4-րդ դասարանում, և երբ ավարտեցինք այդ տարի դեռ ապրում էինք այդ ավանում/: 5-го класса там не было, Света ушла в другой район учится, за сорок километров /5-րդ դասարան այնտեղ չկար, Սվետան գնաց ուրիշ շրջանում սովորելու՝ քառասուն կիլոմետր հեռու/: ՈՒ պապան իրան մի ընտանիք էր տարել, որ էլի հայեր էին ու պապան ամեն կանիկուլների /արձակուրդների/ ոտքով գնում էր ու բերում իրան: Եթե չեմ սխալվում պապան էդ մարդկանց դեռ Երևանում էր ճանաչում, դրա համար էր պապան իրանց ընտրել:

Ռ1_ Семья была большая, трое детей у них было и хозяйка пекла хлеб из муки и картофеля /մեծ ընտանիք էր, երեք երեխա ունեին և տան տիրուհին հաց էր թխում ալյուրից ու կարտոֆիլից/: Ուրեմը սենց մեծ թասի մեջ, կառտոշկա էինք կլպում, տյոռկա անում, հետո ինքը էդ հում մանրացրած կարտոֆիլին ալյուր էր ավելացնում, խմորը հունցում, ու տենց հաց էր թխում: Տենց էժան էր սստացվում՝ կեսը ալյուր, կեսը՝ կարտոֆիլ: Որովհետև ես արդեն համեմատած մեծ էի՝ 5-րդ դասարան, էդ տյոռկեն ինձ էր միշտ հասնում: Շաբաթը մեկ հաց էր թխում ինքը, էդ տյոռկայից естественно /բնականաբար/ սաղ ձեռքերս քրքրվում էին, արյունոտ վերքեր լինում: Սուս ու փուս անում էի, մեկ-մեկ էլ պուճուրների հետ դասեր էլ էի անում: Տենց իրանց օգնում էի: Я молча делала, честно говоря /ճիշտն ասած սուս անում էի/ դե երեխա էի: Էդ ընտանիքում ես даже /անգամ/ մի տարի էլ չապրեցի: Հետո էդ մարդուն ինչ-որ մի բանում մեղադրեցին ու իրանք հրաժարվեցին ինձ պահելուց и я ушла жить к русским /ու ես գնացի ռուսների հետ ապրելու/: У нас в школе были русские девочки с ближайших деревень, которые вместе нанимали но учились в разных классах, я была среди них младшая /մեր դպրոցում կողքի գյուղերից ռուս աղջիկներ կային, որ միասին վարձակալում էին, բայց տարբեր դասասարաններում էին սովորում, ներանցից ամենափոքրը ես էի/: Каждую субботу, после школы пешком ходили домой а воскресенье возвращались, чтоб в ппонедельник пойти в школу /ամեն շաբաթ, դպրոցից հետո ոտքով գնում էին իրենց տուն իսկ կիրակի երեկոյան վերադառնում, որ երկուշաբթի առավոտ դպրոց գնան/: Գնում էին իրանց տները, իսկ ես, որովհետև հեռու էի ապրում, մնում էի էդ տատիկի մոտ: Ու էդ աղջիկները որ գալիս էին

իրանց գյուղում էլ չկար բարձր դասարաններ: Это Вам трудно понять, снимали угол /դա Ձեզ դժվար է հասկանալ, անկյուն էինք վարձում/: Որովհետև էդ սենյակում, որտեղ մենք ապրում էինք 2 հատ թախտի նման բան էր դրած, էդ աղջկեքը դրա վրա էին քնում, ես էլ պեչկայի վրա: Մեկ-մեկ իրանք էլ էին գալի՝ ընդեղ տաք էր քնելու համար: Իսկ պարապելու անկյունում սեղան էր մի ահտ դրած, հերթով դաս էինք անում: Հետո էդ աղջիկները որ իրանց տներ էին գնում, ինչ-որ բաներ հետները բերում էին, ինչ-որ բաներ առնում էին: Ինձ էլ տան տիրուհին էր կերակրում: Որովհետև իմ վարձի մեջ դա էլ էր մտնում: Ու էդ կնիկը կով, խոզ, բան хозяйство /տնտեսություն/ ուներ: Կաթ, պանիր, կառտոշկա էր խորովում, միս էր դնում հետը, տենց էլի, ինչ կար ուտում էի: Հիմա էլ, ինչ կա դրանով յոլա եմ գնում: Մամաենք փող էին ուղարկում՝ վարձը ու մի քիչ էլ ինձ на карманные расходы /գրպանի ծախս/: Մերոնք էլ են տենց, ինչ ունեցել ենք դրանով յոլա են գնացել ու ամեն ինչ առնում էինք: Իմ մաման չէր կարա կով կթեր՝ մերոնք մենակ գրիչ, մատիտ ու թուղթ… տենց բան գիտեին: Գյուղացու կյանք չեն ունեցել, իսկ ովքեր ինչ-որ ձևով хозяйство ունեին, լավ էին ապրում՝ ունեին սեփական ձուն, կաթը, միսը, պանիր էին սարքում: Մենք տեղ էլ չունեինք անասուն պահելու համար, խոտի տեղ, էդ էլ ա ծախս, մենակ огород /բոստան/ ունեինք՝ բոլորն ունեին: Մաման տենց գործերից չեր կարում, պապան էր զբաղվում, դե պապան էլ հո չէր կարա համ իրա աշխատանքը համ էլ տենց բաներ, դժվար ա մի մարդու համար, մենք էլ արտակարգ օգնողը չէինք: Շատ-շատ պապայի բրիգադայի տղերքը գային կարտոֆիլի տնկելուն օգնեին: Վոբշեմ, մեր ունեցածը հիմնականում կարտոֆիլ էր՝ տարբեր ձևերով սարքած: Իսկ մնացածը առնում էինք: Վերջում, որ արդեն մամային թույլ տվեցին որ աշխատի մի քիչ ավելի հեշտ դառավ: Ձմեռը բան չկար՝ տելեգրեյկայով էինք, ոտքերին՝ ֆինկա էինք հագնում, բաբուշկայի գործախ գուլպեքով ու գալոշով, շալը կապում էինք գլխներիս ու վազելով գնում էինք դպրոց, դպրոցից էլ վազելով գալի տուն: Որովհետև չունեինք էդ վախտ հանարավորություն վալինկա առնելու համար: Հաջորդ տարին արդեն կարողացանք վալինկա առնենք, մեզ իհարկէ ոչ ոք ոչ մի բան չէր տալիս: Մաման իրա շորերը ձևափոխում էր որ հագնենք: Հիշում եմ մի հատ սև շոր ունեինք, երբ որ դպրոցում новогодний вечер, маски /ամանորյա գիշեր, դիմակահանդես/ բան, դես-դեն պետք էր տոնական հագնվել: Դիմակը մի կերպ սարքեցինք, արդեն չեմ էլ հիշում մամայի թե տատիկի շորն էր էդ երկար սև շորը, կարճ ասած, ես դա հագա ալյումինե ֆոլգայից աստղիկներ կտրտեցի ու կպցրի, տենց ստացվեց ночь /գիշեր/: Մի երկու անգամ տենց եմ գնացել, ուրիշ բան չունեի ու շատ էլ գոհ էի: Ինձ դուր էր գալիս, որ իմ ձեռքով էր արած:

Դպրոցում ինձ լավ էին վերաբերվում, որովհետև моя речь была на литературном русском языке /իմ խոսքը գրական ռուսերենով էր/ իսկ իրանք խոսում էին իրանց դրսի բարբառով, իրանց էդ գովռով /բարբառով/: И меня всегда приводили в пример, что я не русская, но намного грамотнее пишет и рассказывает /ու միշտ ինձ օրինակ էին բերում, որ չնայած ռուս չեմ, բայց ավելի գրագետ եմ գրում ու պատմում/: Իսկ իմ մոտ էլ չէր ստացվում իրանց նման խոսալը:

Սովետի վախտ դպրոցական երեխեքին տանում էին на картошку /կարտոֆիլ հավաքելու/, մեզ տանում էին на сбор лена /լյոն հավաքելու/, մի անգամ էլ՝ աշնանը ցորենը մշակելու էինք գնացել: Ուրեմը сбор лена /յոնի հավաքելը/, անձրև էր գալիս, բան, մեզ մի հատ շենք են տվել տղա-աղջիկ լցվել էինք, մեր քնելու տեղն էլ солома /ծղոտ/ էր, հի-հի, հա-հա սաղ օրը: Տես, երեխեք էինք մեզ աշխատացնում էին, բայց ես չեմ զգում որ էդ վատ բան էր, травма /վնասվածք/ չունեմ, մենք առանց ծնողների էինք ապրում, բայց ուրախ էինք, երբ ուզում զարթնում էինք, երբ ուզում՝ քնում, վրեքներս խոսացող չկար: Բա որ անձրևը գալիս էր… մենք էլ կռացած հա պոկում էինք, ու մրցում էինք՝ թե որ բրիգադը ավելի շուտ, ավելի շատ կհավաքի: Էդ արդեն соревнования /մրցակցություն/ էր: Ու ոչ հիվանդանում էինք, ոչ բան: Հետո, մի անգամ էլ գնացել էինք ցորեն հավաքելու: Սկզբից մեքենան մաղում էր, մենք էլ գիշերը խրվում էինք էդ տաք ցորենի մեջ ու ձայների տակ քնում: Բա որ արևածագն էինք տենում, ոնց էինք ոգևորվում, էդ ինչ գեղեցկություն էր: Նենց լավ տաք ու հաճելի զգացողություն էր, ոնց որ ջուրը որ քցվում ես, նենց էլ բացի գլուխը քցվում էինք էդ տաք ցորենի մեջ: Տենց մոտավորապես քսան օր կամ մի ամիս աշխատացնում էին: Աշխատել ենք, որ հիշում եմ էն ցեխին, անձրևի տակ ոնց էինք էդ բրիգադայով մրցում, որ մեր նկարները պատին կպցնեն, ու համբալի նման ձեռով ոնց էինք էդքանը պոկում, ձեռքերը սաղ մազոլ էր: Երեխա էինք, շատ էինք ջոկում ինչ ա, մեր համար կարևորը որ ուրախ էինք ժամանակ անցկացնում: Ծիծաղով քնում, ծիծաղով զարթնում էինք, շորերն էլ ըսկի չէինք փոխում:

Ռ2_ Մի տարի, որ արդեն я должна была идти в 5-й класс, а Света в 7-й и папа написал заявление чтобы его перевели в другой центр, где есть школа /ես պիտի գնայի 5-րդ դասարան, իսկ Սվետան 7-րդ ու հայրիկը դիմում գրեց, որ իրան տեղափոխեն ուրիշ կենտրոն, որտեղ դպրոց կա/: Ու տենց, մեր ընտանիքը տեղափոխվեց Տյագուն, որովհետև ընդեղի դպրոցը տասնամյա էր: Շատ լավ տեղ էր, կայարան էր, այսինքն գնացք էր անցնում, զարգացած էր:

Ընդեղ ֆինսկի դոմիկներ կային /ֆիննական տներ/: Տենց մի դոմիկի կեսը մեզ տվեցին, պայմանները ավելի լավն էին՝ երկու սենյակ, բալկոնով /պատշգամբով/, ազառոդով /այգով/ ու դիմացն էլ գետ էր հոսում: А рядом был домик нашего коменданта, а в той части жил врач педиатр - Борис Николаевич /հարևանությամբ մեր պարետի տունն էր, իսկ էն մասում բժիշկ-մանկաբույժ Բորիս Նիկոլայեվիչն էր ապրում/: Փողոցի մյուս կողմում եվրեյ /հրեա/ էր՝ Կանստանտին ինչովիչ էր, չեմ հիշում, ինքն էլ хирург /վիրաբույժ/ էր: Ես էդ լավ եմ հիշում, որովհետև էդ ընթացքում հաճախ էի հիվանդանում, դրա պատճառով մոտավորապես մի տարի դսերը բաց թողեցի:

Ռ1_ Կարճ ասած, էդ պարետը, որ մեր հարևանն էր, ամեն ամիս մամաս ու պապաս գնում ստորագրում էին որ ոչ մի տեղ չեն փախել: И семья этого коменданта к нам хорошо относилась, там у них дети и бабушка были /էդ պարետի ընտանիքը մերզ լավ էր վերաբերբում, նրանք երեխաներ ու տատիկ ունեին/: Мы дружили как соседи /մենք հարևանների նման էինք/: Երբ իրանց կովը ծնեց, հորթին բերեցին պեչկայի /վառարանի/ կողքը տեղ էին սարքել՝ որ տաք լինի, մենք էլ գնում նայում, ուրախանում էինք: Պատկերացնում եք մի սենյակում հորթի հետ ապրում էին: Շատ մաքրասեր էին между прочем /իմիջիայլոց/: Բա ինչ անեին կսատկեր խեղճը դրսում էդ մառոզին /ցրտին/: Որ мороз /ցուրտ/ էր լինում մենք ուրախանում էինք, որովհետև չէինք գնում դպրոց: Հետո որ արդեն սովորեց ոտի վրա կանգնել, տարան գոմ: Ուզում եմ ասեմ, мы дружили с комендантской семьей, и этот комендант поручился, чтобы мама смогла работать /ընկերություն էինք անում պարետի ընտանիքի հետ, ու էդ պարետը երաշխավորեց, որ մաման կարողանա աշխատի/: Չգիտեմ հիմա մեզ за кого считали там /մեզ ում տեղն էին դնում/ որ ամեն ամիս ստորագրում էինք … Ու իրա ասելուց հետո մամային վերցրին ճաշարանում կալկուլյատոռի աշխատանքի: Հաշվապահության մնան մի բան էր, բայց ամենացածր աստիճանի էլի: Ու դրանից հետո մեզ ինչ պետք էր ըտեղից էինք առնում՝ մաման платила /վճարում էր/: Մի տեսակ уровень был другой как говорится /ինչպես ասում են մակարդակն ուրիշ էր/: Էդ նույն ճաշարանից պոնչկ ու պեռաշկի էին բերում դպրոց վաճառքի՝ դե արդեն ինձ ճանաչում էին ու տալիս էին, մաման էլ հետո վճարում էր: Բնականաբար նվեր չէր: Դե դրանից հետո երբ արդեն սկսեցին թուլ տալ որ մարդիկ տեղափոխվեն Երևան, ես բաբուշկայի /տատիկի/ հետ եկա Երևան: Առաջինը ես եկա, որովհետև արդեն 10-րդ դասարանում էի ու պետք էր ստեղի ատեստատ ստանայի,

նենց, որ հետո քիչ ստեղ-ընդեղ քաշքշուկ լինի: Մի խոսքով, արձակուրդներին ես եկա, իսկ իրանք դեռ պետքա հավաքվեին, բան, որ նոր կարողանային գային:

55-ի դեկտեմբերին դուրս եկանք ու 56-ին արդեն եկանք Երևան, ու գնացի 55-րդ դպրոց последние полгода доучилась там /վերջին կես տարին էնտեղ սովորեցի/: Որ համեմատում եմ՝ ընդեղ պրեպդները /ուսուցիչները/ կարողանում էին հետաքրքիր մատուցել առարկան: Մի դեպք պատմեմ русский язык литература /ռուսաց լեզու, գրականություն/ առարկայից: Ընդեղ եթե ինչ-որ հեղինակ, թեմա էինք անցնում, մեզ տալիս էին չորս ժամ, որ շարադրություն գրեինք՝ պլան էինք կազմում, ենթագլուխներ, ցիտատներ և այլն, արդյունքում մոտավորապես վեց թերթ նոյթ էր ստացվում: Երբ գնացի ստեղի դպրոց, առաջի շարադրությունը որ գրեցի առանց սևագրի ու մոտավորապես 1.5 ժամ տևեց: Որ իբր 55-րդ դպրոցը ամենալավ դպրոցներից մեկն էր, ու մեկ էլ տենամ գրում են առանց պլանի, մոտավորապես 2 թերթ: Էդ զարմացրեց, որովհետև ընդեղ դա ստեղծագործական աշխատանքի նման մի բան էր, շարադրություն գրելու օրը բլոր դասերը նախօրոք չեղարկում էին, որ մենակ դրանով միտքը զբաղվի: Ամեն օր հո չէինք գրում՝ երբ ինչ որ հեղինակի էնք անցնում ու կարդում էինք իրա ստեղծագործությունները, պետք էր որոշ բաներ անգիր իմանալ և այլն: Ուզում եմ ասեմ էդ մակարդակի կազմակերպված էր դասը, դասատուն էլ եվրեյ /հրեա/ էր, շատ լավ դասատու էր: Իսկ ստեղ ինչ-որ բան են կարդացել ու պատմում են, ու դրա դիմաց գնահատական են ստանում: Շշմել էի: Դուրս էին գալիս մի գլուխը մի քանի հոգով պատմում ու իրանցից գոհ նստում: Բայց այ մաթեմատիկայի, ֆիզիկայի ու քիմիայի դասատուները լավն էին: Լավին լավ ես ասում, վատին՝ վատ:

Ռ2_ Մի բան ասեմ էլի, մենք 101 ուչաստկից /բնակավայրից/ եկանք ուչաստկ Ռասսիպնայա, ու ընդեղ գետ էր հոսում, ու գետի մյուս կողմում բարաք /խրճիթ/ կար: Էդ բրաքը շատ էր աձանձնանում էդ տարածքում՝ իբր ընդեղ ցիվիլ մարդիկ էին ապրում: Մենք էդ բարաքում էինք ապրում: В целом двинадцать семей /ընդհանուր 12 ընտանիք/: Ընենց միջանցք էր ու աջ ու ձախ դռներ՝ առաջի դուռը ֆրանսիայից եկած հայեր էին со своей цветной палаткой /իրենց գունավոր վրանով/ они не знали что такое Сибирь /նրանք չգիտեին ինչ է Սիբիրը/: Իրանք որ 48-ին եկել էին Երևան, իրանց վեշերի մեծ մասը չէին էլ հասցրել քանդեն, իրանց հավաքել բերել էին Սիբիր ու իրանց ունեցած-չունեցածը փոխանակում էին կաթի, կամ էլի ինչ իրաց պետ լիներ, տենց բաների հետ: Իրանք явно /բացահայտ/ ուրիշ խավ էին: Տիկին Բեկի էր իրա

անունը, մի տղու անունը Ալեն էր, մոյսինը՝ չեմ հիշում: Երկու տղեն էլ красавцы /գեղեցիկ/, ինքը շատ ինտիլիգիենտ կին էր, շատ սիրուն էր հագնվում: Մեր դուռը 2-րդն էր, հետո Փառանձեմն էր ապրում իրա Պիստրյոնայով /կովի անուն/, հետո Հասմիկենք, Թասչյաններն էին, այ տենց մենք ապրում էինք: Ու էդ խրճիթում ապրելու ընթացքում մեր Գրիշա ձյաձայան /քեռին/ եկավ: Ընդեղ զուգարան էլ չկար, ինչ-որ օբշի տուալետ էր /ընդհանուր զուգարան/: Ինքը առավոտը զարթնում էր, հագնում իրա շորերը ու գնում տայգա՝ տուալետ:Ման էր գալիս, դե վայենի մարդ ա /զինվորական/ ցիվիլնի երկրից եկել ա ու մենք ինչ-որ բարակում ու սաղ խեղճ-մեղճ: Ձմեռ էր ու ինքը իմ ծնունդի օրերին էր եկել: Я в свой день рождения прихожу из школы домой и вижу у нас на этажерке тарелочка а в ней две картофельные катлеты / ես իմ ծնունդի օրը, դպրոցից գալիս եմ տուն, տենամ դարակի վրա ափսե, որի մեջ կար երկու կարտոֆիլե կոտլետ/ ու դա իմ ծնունդի նվերն էր, Հասմիկ ծյոծյան էր սարքել, ինքը по образованиюю /կրթությամբ/ մանկավարժ էր: Այ իրա Պիստրյոնա կովի կաթն էր իմ բռատիկը /եղբայրը/ խմում: Ամեն օր ինքը իրա բաժակով գնում էր իրանց մոտ, Հասմիկը հենց բաժակի մեջ կթում ու տալիս էր իրան: И так в день три раза /ու տենց օրվա մեջ երեք անգամ/ մինչև մենք ընտեղից չգնացինք ուրիշ տեղ ապրելու, որովհետև Սվետան տեղափոխվեց 7-րդ դասարան ես էլ 5-րդ: Вспомнила, в нашей комнате, на права стояла кровать, всю пастель мы собирали на эту кравать, оставляли в центре место и нашу младшую сестренку, которая тоже там родилась, кидали туда /հիշեցի, մեր սենյակում, աջ կողմից մահճակալն էր, որի վրա հավքում էինք ամբողջ տեղաշորը, կենտրոնում տեղ բացում ու մեր փոքր քրոջը, որը նույնպես այնտեղ ծնվեց, նստեցնում վրան/:

Ռ1_ Ես էդ ժամանակ ուրիշ գյուղում դպրոց էի գնում ու նամակ ստացա մամայից, որ у меня родилась сестра /ինձ քույրիկ է ծնվել/: Ու դպրոցից էկա, մտա տուն, ման եմ գալիս որ գտնեմ, էն էլ երեխեն բարձերի մեջ ա: Խելոք երեխա էր ինքը շատ, եթե ախպերս խելոք չէր եղել, ինքը շատ խելոք էր:

Ռ2_ Էդ ժամանակ ապրիլին արդեն оттеплель /հալոցք/ էր, որ արդեն գետը չես անցնի ու կար лодочник /նավավար/ Պուշկարով: Ու մի կին կար մեր մոտ՝ տիկին Գոհար, Եգիպտոսից եկած հայուհի էր: Она обед дала, что пока она в Сибире, будет ходить в бруюках /նա երդվել էր, որ քանի դեռ Սիբիրում է, շալվարով է մնալու/: Она была единственная женщина там, каторая ходила в брюках /միակ կինն էր որ շալվարով էր ման գալիս/: Это был 1952 год /դա 1952 թիվն

էր/: Համ էլ շատ սիրուն, խիտ մազեր ուներ, բայց նենց էր կտրում, ոնց-որ տղամարդ: Շատ լավ կին էր, Եգիպտոսում բուժքույր էր աշխատել, ու ամեն տենց բժշկական հարցերում շատ շատերին էր օգնում: Ու տենց մեր տիկին Գոհարին Պուշկարյովի նաակով բերեցինք ու մեր փոքր Աննան ծնվեց: Մենք ընդեղ ասում էինք որ էդ տիկին Գոհարը Աննայի քավորկինն ա: Ու իսկականից, երբ արդեն Հայաստանում էինք, մաման ու ինքը վերցրել էին ախպորս ու Աննային ու գնացել էին Էջմիածին երեխեքին կնքել: Էդ արդեն 56, 57 թվերն էր, մի քիչ ուշոտ: Ու տիկին Գոհարը բոլորին ասում էր որ ես իրա սանիկն եմ, բայց իրա սանիկը քուրս ու ախպերս էին: Ամեն օր դասի գնալուց առաջ ու հետո, իրան պտի տեսնեի, քննությունից առաջ պտի կոֆեիս բաժակը նայեր, ասեր ոնց ա անցնելու:

Սվետլանա և Ջուլիա Պետրոսյանների մայր՝Ելիզավետա Միսկարովան /ձապից/ որդու և եգիպտահայ տիկին Գոհարի /աջից/ հետ:

Գարեգին Պետրոսյանը որդու հետ:

Մեր լեսպռոմխոզի /անտառտնտեսության/ դպրոցը յոթնամյա էր ես ընդեղ была председатель совета дружины /ջոկատի խորհրդի նախագահ/: Коротышка /կարճլիկ/, այ սենց վոր չէր ասում դռուժինա ռավնյայս /ջոկատ շարվիր/, սմիռնը /հավասար/՝ սաղ զգաստանում էին: Մեկ էլ էն էր հետաքրքիր մեր դպրոցում, որ տասնամյա դպրոցում չկար՝ մենք շրջան էինք կազմում՝ մանավանդ մեծ դասամիջոցին, բոլորը երգում էին ´´Сталин, всегда за мной´´. Կարճ ասած մեզ բոլորը սիրում էին, էդ իմ ասած ինտիլիգենցիան՝ Իստոմին, Բորիս Նիկոլայեվիչ, Կանստանտին Սիմյոնովիչ էր ինչ էր, բոլորը մեր հետ ընկերություն էին անում, мы почти что на одной ноге были /գրեթէ հավասարը հավասարին էինք շփվում/: Մեզ շատ էին հարգում, որ մեզ մի բան էր պետք լինում էդ Բարիս Նիկոլայեվիչը միանգամից վազելով գալիս էր, մեծ մարդ էր տարիքով, արդեն վաթսունն անց կլիներ: Կանստանտինը ավելի երիտասարդ էր: Հետո, չգիտեմ, մեր ժամանակ մեծերով որ խոսում էին մենք չէինք լսում, ու մեր ներկայությամբ էլ մեծերը շատ բան չէին քննարկում: Եթե հանկարծ տենց մի բան, մեզ էդ տեղից հանում էին՝ ուղարկում ուրիշ տեղ խաղալու: Դեաժե /անգամ/ որ աղրեն մեծացանք,

Ստալինի մահը ընդեղ տեսանք, պապաս ասում էր՝ - դրսի խոսքը դուրսը թողեք, ներսինը՝ ներսը: Այսինքն ներսից մի տարեք դուրս, դրսինն էլ ներս մի բերեք: Իմ պապայից էդ խրատն եմ հիշում:

Ռ1_ Ուրեմն Ստալինը որ մահացավ, լավ հիշում եմ, բարձրախոսները դրսում միացրած էր ու տենց հայտարարում էին: Ժողովուրդը լացում էր, в школах делали траурные линейки /դպրոցներում սգո շարասյուն էին կազմակերպում/: Ու ես եկա տուն, ասեցի սենց, սենց բան ա եղել, պապան՝ իբր դե եղել, եղել ա, ու ասեց որ ինքը գիտի որ տենց բան ա եղել, դրսից պետք չի ոչ մի բան տուն բերել: Որ էդ թեմայով չխոսայինք: Ու նույնը հիմա ես եմ իմ երեխեքին ասում, ու երևի էդ ճիշտ ա, որ բամբասանք չլինի: Ու հետո մի լավ սովորություն էլ կար մեր ընտանիքում, բայց դա արդեն Հայաստանում, որ սեղանի շուրջ բոլորը հավաքվեին ու սկսեին ուտել, միայն երբ բոլորը ներկա են, մանավանդ մաման: Չգիտեմ ումից էր դա գալիս պապից, թե՝ մամայից:

Սվետլանա և Ջուլիա Պետրոսյանների մայրը՝ Ելեզավետա Միսկարովան:

Ռ2_ Էն անգամ մտածում էի, որ մենք Սիբիրը տեսանք, եկանք հայաստան սկսվեց տան

համար պայքարը, մինչև ունեցանք էլի շատ տանջվեցինք: Հետո սկսվեց Արցախյան պատերազմը, մութ ու ցուրտ տարիները ու հիմա էլ համաճարակը: Ուզում եմ ասել, որ կյանքը մեզ նենց դաս ա տվել, որ էլ չգիտեմ ինչ կար որ չենք տեսել: Մի տեսակ արդեն դրան էդ վիճակին էլ ենք համակերպվել, որ ինչ ասես կարա լինի: